

Տ. ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՍՏԱՆՅԱՆԻ ԶԱՐՈՋԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՆՈՐ ԿԻՐԱԿԻՆ ՄԱՏՈՒՅՎԱԾ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(27 ապրիլի 2003 թ.)

«Եւ Բանն մարմինն եղև ևս բնակեաց ի մեզ»:
(Հովհ. Ա 14)

«Ցանուն Հոր ևս Որդոյ ևս Հոգոյն Սրբոյ. ամեն»:

Հովհաննես առաքյալի այս հաստատումն աստվածաբանական հրաշալի ձևակերպումն է այն մեծագույն խորհրդի, որ Աստված հաղթված Իր սիրուց խոնարհվեց՝ «աղքատացավ», եկավ դառնալու մեզանից մեկը, ով Իր վրա կրեց ամբողջ մարդկության մեղքը և փառապանքը, գամվելով խաչի վրա, որպես բարձրագույն արտահայտություն սիրո վկայության:

Առաքյալն այս փողերով է սկսում իր Ավետարանը, հռչակում է Աստծո Որդու հավիտենականության լույս և անսահման ու ընդգրկուն լինելու մասին և այդ ամենով հանդերձ կատարում այն հաստատումը, որ այդ Խոսքը՝ Աստծո Որդին, մարմնացավ, մարդացավ և բնակվեց մեր մեջ: Այս հաստատումը բազմաթիվ հատորների և գրքերի, խորհրդածությունների, մտածումների փնտիք է փվել, և ես այս վայրկյանին չեմ ցանկանում մանրամասնել կամ աստվածաբանական խորությունների մեջ մտնել, թե ինչպե՞ս են մեր հայրերը փեսել այս հաստատվածի մեկնությունն իրենց մտածումների և խոհերի մեջ: Եվ ուզում եմ շեշտակիորեն մեր միտքը բևեռել այսօրվա խորհրդի վրա, որ Նոր Կիրակիի խորհուրդն է, Կրկնազատիկն է, այն փոքր, այն խորհուրդը, որ առաքյալներին պատահեց Հարությունից հետո և ահավասիկ 2000 փարիներ և ավելիով պատահում է նաև մեզ:

Այսօր երկրորդ կիրակին է մեր Տիրոջ Հարությունից, մեռելներից զարվելուց հետո: Եվ ինչպես այն ժամանակ, երբ առաքյալներն էին Վերնադարան մեջ ցնծում մեր Տիրոջ կենդանությամբ, մենք ևս նույն ուրախությունն ենք ապրում և բնութագրում ենք մեր այսօրվա օրը որպես Նոր Կիրակի, Նոր կյանքի Կիրակի և կրկնվող զարթիկ, կրկնվող զարվել մեռելներից:

Երբ Աստված արարեց աշխարհը, երկինքն ու երկիրը, առաջին խոսքը, առաջին բառը, որ եղավ, դա լույսի հռչակումն էր. «Եղիցի լույս»՝ Հարությամբ սահմանված Նոր արարչագործության ժամանակ Աստծո առաջին խոսքը ուղղված մարդկությանը, նոր կյանքի նշանաբանը «Մի երկնջե՛ք»-ն էր: Եվ այս Նոր Կիրակիի պայծառ առավոտը, որ բնության պայծառության միջից նաև, այսօրեղ հավաքված մեր սիրելի ու համբուրելի ժողովրդի փեսքից ու աչքերից է գալիս ավելի պայծառ, ավելի լուսավոր, ավելի հուսալի, ես ուզում եմ կրկնել այս խոսքը և հաստատել, որ այս ժողովուրդը երկնջող ժողովուրդ չէ, որքան էլ որ գան-այցելն ցավերն ու դժվարությունները, այս ժողովուրդը Հարության ավերիսը լսած ժողովուրդ է, չերկնջող ժողովուրդ է:

Նոր Կիրակի է այսօր: Իր Զորագլխի հաղթանակով հաղթանակած մարդկության փոքուն է, և մենք արագածորենցիներս հավաքվել ենք հռչակելու Ս. Էջմիածնի 1700-ամյակի փոխակապարտության առիթը՝ դողանջելով Հարության հաղթանակի մնայուն իրականությունը և ճշմարտությունը հայ կյանքի մեջ:

Այսօր, Վեհափառ Տեր, մենք Լուսավորչահեղեղ վայրերից՝ որպես Էջմիածնագիրկ ժողովուրդ եկել ենք հայկական «Բանն մարմին եղև» բնակավայրը՝ համբույր փալու և համբույր առնելու դարերը իրար հյուսող Ձերդ Սրբության Օծյալ Աջից, հավաքարմության ուխտը կնքելու Աստծո, մեր պապության, մեր իսկ ինքնության հեղ, Սուրբ Էջմիածնի հավերժական խորհրդի հեղ: Այսօր այս ժողովուրդն իր իշխանությամբ և շինական դասով, իր հոգևորական դասով, իր մանուկով, երիտասարդով և ծերով եկել է կրկնելու և հաստատելու, որ նոր կյանքի կրողներ ենք մենք, Նոր Զարիկ ապրող ժողովուրդ:

Եկել ենք մեր նույնությունը հայտնելու այն գեղեցկագարդ ավանդություններին, որոնք ճաճանջվում են Հայոց այս փան վրա՝ Սուրբ Կույսերի անարար արյունով ոռոգված, Լուսավորչի անպարտելի հավաքով խրաչացած և Երկնավոր Շողով լուսավորված, որ իջավ այսպեղ՝ իր ալիքների վրա կրելով Միածնին, Ում ձեռքով իսկ հիմնադրվեց Հայոց Հոգեշենքը: Այս Տունը որպես հաստատված փառոս միայնակ և առանց որևէ օգնության դարավոր պայքարը մղեց հին և նոր հարձակումների դեմ, մրքի բազմամյա ճիգը ներդրեց՝ ձևավորելով հայի ինքնությունն ու լինելությունը:

Այն հոգևոր և բարոյական մի անանցանելի Արարատ է, նյութական Արարատի հայացքին սևեռուն հսկող՝ նրա նման ալևոր, վեհափառ ու երկնասլաց:

Այսօր մեր թեմի այս խանդավառ ժողովրդի կյանքի մեջ Նոր Կիրակի է, և ես Հովհաննես ավերարանցի խոսքը՝ թե «Բանը մարմին եղև», քեսնում եմ մեր ժողովրդի միջից այս փաճարը՝ իրեն մարմին ունենալով՝ միևնույն ժամանակ լինելով այդ արքաահայրության գործնական կրողը: Այս առավուր մեր ժողովուրդն է մարմնացել Ս. Էջմիածնի Մայր Տաճարով, որպես կենդանի վկայություն այդ խոսքի: Այդ խոսքն այսօր մեզ համար չի մնացել իբրև պարզ գրված խոսք Ավերարանում, չի մնացել որպես աստվածաբանական մեկնությունների փեղիք, այլ կենդանի այսպեղ է՝ այս սիրասուն ժողովրդով մարմնացած:

Եվ մենք եկել ենք, Վեհափառ Տեր, օշականաբնակ մեծ Սուրբի՝ Մեսրոպ Մաշտոցի խորհրդով, Արագածի կանթեղի խորհրդով՝ Սուրբ Լուսավորչի քայլած վայրերի խորհրդով, քեսնելու մեր հայելին այս փաճարի միջից և մեր սիրտը, միտքը, հոգին դրոշմելու Իջման Սուրբ Մեղանի Խաչի վրա՝ որպես պարտապաշտություն գործելու և ապրելու հայոց այս մեծ փան հոգևոր վերելքի և մեր հայրենիքի պայծառության և լուսավոր գալիքի համար: Մենք զավակներն ենք Սուրբ Գրիգոր Լուսավորչի, մենք զավակներն ենք Սուրբ Մեսրոպ Մաշտոցի: Այսօր մեր երկրում, բազում դժվարություններով հանդերձ, մենք վկայում ենք, որ այս եկեղեցին է միակ այն կապը, միակ այն ժառանգությունը, որ մեզ եղ է փառնում դեպի այն անունները, որոնք ներշնչում են մեզ, և հաղորդության մեջ է դնում նրանց հեղ: Պատվությունն այս ճանապարհով մեզ համար չի ընդհատվում, չի ավարտվում և չի ավարտվելու, քանի դեռ կա այս հողին կանգնած 1700-ամյա այս սքանչելիքը: Որքան էլ մեր պայմանները փաստապարհիկ անգամ բարելավվեն, թող փա Աստված, բայց այս ժառանգությամբ

յան կապը, նույնության կապը, նույնության տեսիլքը, նույն հայացքը ունենալը մեր մեծերի, մեր հայրերի հետ, այս հայելու միջից է արտացոլված և հստակ արտահայտված:

Այսօր Նոր Կիլիկիայի է, և մենք նոր խոսքի կրողներ ենք. հեղուկաբար մեր սիրտը, մեր պարտապանությունը հյուսենք՝ անկախ մեր պաշտոնից, անկախ մեր դիրքից, անկախ մեր ունեցած զանազան հնարավորություններից՝ որպես խոնարհ ու ծառայելի զավակը մեր այս տաճարի, Մայր Աթոռի և Ամենայն Հայոց Հայրապետության, և խոնարհ ու ծառայելի զավակը մեր լույս հայրենիքի, մեր սքանչելի ազգի՝ ուխտենք այսօր, որ ոչ մի բայլ, ոչ մի աստիճան չենք երկմտելու այդ ճանապարհի մեջ, որն արյունով և արցունքով է ձեռք բերված և մանավանդ մեզ համար, արագածոտնեցիներին համար, որի լույսը տեսնում ենք ամեն օր Արագածի Սուրբ գագաթին «անմեղ սիրով և արդար հավատքով», որի լույսը տեսնում ենք Օշականում, Սուրբ Մաշտոցի անխոս ու մշտաբարբառ դամբարանով:

Ուխտենք հավատարմության և վկայության. հավատարիմ այն արժեքներին, որ ունենք մենք այսօր և վկայություն այն արժեքներին, որոնք անցել են երկար ճանապարհ: Եվ իմ խոսքը, թեև ոգևորության սահման չկա տեսնելով պարկերը մեր թեմից եկած այս ալիքի, չեմ ուզում երկարել, այլ ամփոփելով ուզում եմ հիշեցնել երկու սքանչելի արտահայտություն. մեկը՝ արտասանված բանաստեղծ Ավետիք Իսահակյանի կողմից, որ ասում է. «Իմ մանկության օրերին ես շար եմ լսել, որ մեր ազգը հռչակվել է որպես Էջմիածնա ազգ, և շարունակում է,՝ եթե քերես այս ազգի, այս ժողովրդի մաշկը, այնպես ինչպես արյունը Էջմիածին անունը դուրս կգա», և երկրորդ խոսքը, որ արտասանվել է դաժան պայմանների մեջ որպես վկայություն, 1937 թվականի Պետական անվտանգության կոմիտեի բանտում չարաշահանքների ժամանակ, Թադե եպ. Հարությունյանի կողմից:

Իր կրթանքների ու փառապանքների մեջ չընկճվող այդ Սրբազանի հեղուկալ այս արտահայտությունը է, որ կարծես թե մեխվել է ամեն հայ մարդու մարմնի մեջ. «Էջմիածնի պարմությունը մեր ազգի պարմության մեջ շար մեծ է, բազում դժվար և դաժան ժամանակներ են եկել և անցել, և այս օրերն էլ կանցնեն, և մենք էլ ձեզ հետ կանցնենք, բայց Էջմիածինը հավերժ շարունակելու է իր գոյությունը»: Մենք այդ հավերժի ճամփորդության նավի ճանապարհորդներն ենք և վկայողներն ենք այսօր, հեղուկաբար մեր գործը, կամքը և կյանքն ու միտքը ներհյուսենք այդ հավատքի վրա՝ որպես զինվոր, ու փառք տանք Ամենասուրբ Երրորդությանը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն: